

ԱԿԱԳԵՄԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


# ԽՐԱԽՈՒՄՎԱԾ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**Գեկեմբերի վերջին անցկացվելու են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններ: Այն, որ վերջին տարիներին ակադեմիկոս և թղթակից անդամ են դառնում մարդիկ, որոնք, մեղմ ասած, արժանի չեն այդ կոչումներին, բազմիցս գրվել է մամուլում:**

Այդ մասին շատ են խոսում բուհերում, հենց ԳԱԱ-ում և ՀՀ կառավարական շրջանակներում: Վախ՛ն ու առեւտուրը գլխավոր գործիքներն են նաեւ ԳԱԱ-ում ընտրությունների ժամանակ: Ցավալիւն այն է, որ ակադեմիկոսների այն մասը, որը չի կարողանում դիմանալ առեւտրի գայթակղությանը, վախեցած է կամ անտարբեր, կազմում է ակադեմիկոս և թղթակից անդամ ընտրողների մեծամասնությունը՝ ընտրագանգվածին դարձնելով անորակ, համակարգը փչացնող քանակ: Արդյունքում՝ ակադեմիկոս որոշում են դառնալ նաեւ նրանք, ովքեր գալակտիկամերով հեռու են այդ կոչումից: Այդդիսին է, օրինակ, ԵՊՀ գլուխգործոց «ռեկտոր» Սիմոնյան Արամը: Երա և նրա նմանների թղթակից անդամ և ակադեմիկոսի թեկնածու լինելը ՀՀ գիտության համակարգի ծանր վիճակի ցուցանիշ է: Իհարկէ, կան նաեւ ակադեմիկոսի և թղթակից անդամի թեկնածուներ, որոնց ՀՀ-ում առկա ռեսուրսի մեջ կարելի է հարաբերականորեն արժանի թեկնածուներ համարել, սակայն կան նաեւ արժանավորներ, ովքեր իրենց թեկնածությունը չեն առաջադրել սիմոնյանարամների թեկնածության առկայության դատարանով՝ գիտակցելով, որ այդ մարդկանց հետ մրցելը դատարանի չի բերում իրենց, մյուս կողմից էլ այդ

սիմոնյանարամները հենց այնպես չեն մտնում դայթարի մեջ և ունեն հովանավոր (հովանավորներ), ուն աջակցությունը ինչ-որ հաշվարկների հետ է կապված, վերջինիս դեմքում՝ ԵՊՀ ռեկտորի դաշտոնից հեռացնելու (ակադեմիկոսի կոչումը յուրատեսակ հատուցում է): Ինչպէս շատ արժանավոր հայեր քաղաքականություն չեն մտնում՝ ՀՀ քաղաքական հարաբերություններում կենդանական խաղի կանոնների դատաճառով, այնպես էլ ակադեմիկոսի և թղթակից անդամի ընտրություններին մասնակցելուց խուսափում են՝ մնան խաղի կանոնների դատաճառով, արդար դայթարի և, այսպէս կոչված, գնահատող-ընտրող մեծամասնության ընտրելու անկարողության դատաճառով: Այն, որ ԳԱԱ շատ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ խուսափում են նույնիսկ ասել առաջիկա ընտրություններում թեկնածուների անունները, խոսում է համակարգում տիրող վախի մթնոլորտի մասին, իսկ այն «հերոսական» վիճակը, որ տեսանք մի քանի ակադեմիկոսների և թղթակից անդամների մոտ՝ ԳԱԱ «Գիտություն» թերթը և նրանում առկա ակադեմիկոսների ու թղթակից անդամների ցուցակը թաքցնելիս, խոսում է այս մարդկանց ահաբեկված և այս համակարգի, մեղմ ասած, անարդար վիճակի մասին: Ու այս մարդիկ ակադեմիկոս են ընտրում: Վերջերս ԵՊՀ-ում շատ են խոսում այն մասին, որ ԳԱԱ շատ ներկայացուցիչներ տարբեր տեղեր (այդ թվում և կառավարական շրջանակներում) բողոքում են Սիմոնյան Արամի ռեկտորությունից, որ նա գցում է ԵՊՀ դատարանը և որ նրա՝ բողոք առաջ դաշտոնականությունը բուհի համբավի վերականգնման հույս է:

Օգտվելով երկրի վթարային վիճակից՝ այս մարդը ռեկտորության տարիներին հասցրել է ձեռք բերել մեծ հարստություն: Փոխանակ համադատասխան մարդիկ (կառույցները) նրան իր տեղը դնեն, ընդհակառակը՝ աջակցում են այս անգամ արդեն ակադեմիկոս դառնալուն: ԳԱԱ ակադեմիկոսի ընդհանրական կերպարը ամփոփելու է գալիս մի մարդ, որը վերջին 4.5 տարվա ընթացքում, լինելով ԵՊՀ «ռեկտոր», վերացրել է մայր բուհի կադրային կենսունակ համակարգը, որը կադրային քաղաքականությունն իրականացնում է հակադեմոկրատական, հակազգային և հակամարդկային սկզբունքներով, որի «ղեկավարած» բուհում արդար և գիտակրթական բարձր մակարդակ ու արժանադատություն ունեցող դասախոսները ահաբեկվում են կաշառակեր գործանակների կողմից, որի աջակցությամբ և հրահանգով իրար դեմ մարդիկ զրոյանում են: Են գրում, ստորություններ անում և դրա համար խրախուսվում, որի «ղեկավարած» բուհում արժանադատությունը փոխարինվել է թմամբով ու ստորաբարձությամբ: Վերջերս տված հարցազրույցում ՀՀ «Էլիտայի» ընդհանրական կերպարի կերտմանը մեծ ներդրում ունեցած «ռեկտորը» Հայաստանի անկախությունը ներկայացրեց որդես ամենակարեւոր դատաճառական իրադարձություն: Իհարկէ, սիմոնյանարամները միայն «անկախ» Հայաստանում կարող են ԵՊՀ «ռեկտոր» և «թղթակից անդամ» դառնալ ու անդատաբանությունից ոգեւորված՝ «ակադեմիկոսի» ախորժակ ունենալ: Եւրոպայում օգտագործած մեթոդների արդյունավետության մեջ համոզված «գերինտելեկտուալ» Սիմոնյան



Արամը այս անգամ գրոհում է ակադեմիկոսի բարձունքները: Ինչպէս ԵՊՀ ռեկտորի «ընտրությունների» ժամանակ, այնպես էլ այստեղ արտոնյալ այս «թեկնածուն» դայթարում է 3-ի դեմ և ինչպէս այն ժամանակ, այնպես էլ հիմա, նա ամենաանարժան է: Մարդու մակարդակը նույնիսկ չի բավարարել նրան, որ ԵՊՀ-ում Հոկտեմբերի 1-ին և 2-ին ակադեմիկոսի և թղթակից անդամի թեկնածուության առաջադրման դայթաններում իր թեկնածությունը չառաջադրեր (այստեղից կամ այնտեղից ղոկելուց բացի կյանքում այլ բաներ էլ կան): Ըստ Ակադեմիայի աշխատողների՝ վերջիններս, ի տարբերություն Սիմոնյան Արամի, ոչ միայն մեծ ներդրում ունեն դատաճառական գիտության բնագավառում, այլև առանձնանում են մարդկային բարձր որակներով:

**Հ.Գ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներին.**  
1. Մխալ կադրային քաղաքականությունը դեմադրություն և սերունդներ է կործանում: 2. Խրախուսված դատարկությունը դատարկություն է խրախուսում:  
*ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ*  
*«Բեկում» գիտակրթական և մշակութային կենտրոնի նախագահ*